

„Pseudo Epiphani Sermo de Antichristo (Armeniacae de fine temporum)“, Introduzione, testo critico, versione latina e note di Giuseppe Frasson. Bibliotheca Armeniaca, Textus et Studia cura Academiae Armeniacae S. Lazari Venetiarum, 2, Venezia—S. Lazzaro, 1976, LXXXIV+392 p. (Ստոյն Եպիփանու ասացեալ Յաղագս Նեոինն (Հայկական Յաղագս վերջնում ժամանակաց)։ Յառաջաբան, քննական բնագիր, լատիներէն թարգմանութիւն եւ ծանօթագրութիւններ։ Աշխատասիրեց Յոսէֆ Ֆրասսոն։ Հայկական մատենադարան, Բնագիր եւ Քննութիւն։ Հրտ. Հայկական կաճառի Կ. Ղազարու Վենետիկոյ, 2, Վենետիկ, Ս. Ղազար, 1976)։

Իտալացի հայագետ Զուգեպե Ֆրասսոնը ընթերցողներին է ներկայացրել սխալմամբ Եպիփան Կիպրացուն վերագրվող և միայն հայերեն բնագրով պահպանված «Յաղագս Նեոինն» վերնագրով մի երկասիրություն, որի վրա ուշադրություն էր դարձրել դեռևս Հ. Տաշյանը, խոստացել անդրադառնալ դրան, բայց, ինչպես նշում է Զ. Ֆրասսոնը, դեռ պարզված չէ, նա իր խոստումը կատարել է, թե ոչ։

Զ. Ֆրասսոնը հրատարակել է «Յաղագս Նեոինն»-ի Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի № 1649 ձեռագրում պահպանված առավել ընդարձակ տարբերակը և Վիննայի Մխիթարյանների Մատենադարանի № 11 ձեռագրում պահպանված (նախորդի համեմատությունով կրճատ) համառոտ տարբերակը, ղուգահեռ ներկայացնելով դրանց լատիներեն թարգմանությունը։ Իր գրքի առաջաբանում Զ. Ֆրասսոնը տալիս է երկու ձեռագրերի մանրամասն նկարագրությունը (էջ XIV—XX), որից հետո անցնում է «Յաղագս Նեոինն» աշխատության ուսումնասիրությանը։ Այն գրված է իտալերեն։ Այստեղ նա նախ և առաջ կանգ է առնում վերոհիշյալ երկու ձեռագրերում պահպանված բնագրերի առանձնահատկությունների վրա։

Ի՞նչ է իրենից ներկայացնում «Յաղագս Նեոինն» աշխատությունը և ե՞րբ է այն ստեղծվել։ Ինչպես արդեն ասվեց, աշխատությունը վերագրվում է Եպիփան Կիպրացուն (մահ. 403 թ.) և կազմողի մտահղացմամբ դա հիշյալ այրի կանխագուշակություններն են ապագայում տեղի ունենալիք դեպքերի, աշխարհի վերջի մասին, ձրբ գալու է նեոը։ Հայ հեղինակը Եպիփան Կիպրացու բերանով ասում է. «Եւ մեր սակաւ ինչ ասացաք զանցեալն որպէս եւ ուսաք, եւ ունիմ ասել զապագայսն, որպէս մարգարէութեամբ տրեւալ ինձ ի շնորհաց հոգւոյն» (Վենետիկի տարբերակ, տող 174—177)։ Ընդ որում, նա հիշում է այն հեղինակների անունները, որոնց երկասիրությունների հիման վրա է շարադրել այդ «անցյալի» պատմությունը (Ազաթանգեղոս, Մովսէս Խորենացի, Եղիշե, Փավստոս Բուզանդ)։ «Անցյալի» պատմության տակ «Եպիփանը» նկատի ունի Տրդատ Գ-ի ու Գրիգոր Լուսավորչի և Կոստանդին Մեծի ու Հռոմի պապ Սեդրեստրոսի միջև կնքված «դաշինքը»։ «Եպիփանն» այնուհետև ցույց է տալիս, որ հետագա ժամանակներում ինչպե՞ս են ճշգրտում նեոյութիւն ի վերայ երկրի, սովոր եւ սրածուծիւնք եւ շարժմունք ի տեղիս տեղիս, եւ խոռվութիւնք եւ արհաւիրք մեծամեծք, փախուստ ի տեղոյէ ի տեղիս յանիձիալ ազգէն Քամայ եւ յաղանց նոցին, որ անուանեալ կոչին Խուզիկ [որ են Թուրք]»։

Դժվար չէ կռահել, որ «կանխագուշակությունները» վերաբերում են XI դ. հետո Հայաստանում ստեղծված իրավիճակին, ձրբ աստիճանաբար վերանում է հայոց պետականությունը։ «Արդ,— այնուհետև գրված է գուշակության մեջ,— քէպէտ եւ իշխեն ի վերայ Հայաստանեայցն, բայց ոչ իսպառ որպէս յանօրէն ազգաց Պարսիցն եւ Մարաց եւ Արաբացւոցն... մնացեն յերիս եւ ի շորս տէրութիւնս իշխանք նմանեալ թագաւորաց» (Վեն. տարբ., տող 152—160)։ «Եպիփանը» տվյալ դեպքում ցույց է տալիս, թե ովքեր են լինելու հայոց վրա իշխող բարբարոսները, որոնց նա անվանում է «ազգն նեոողաց» (տ. 161)։

Խոսելով նման վիճակում գտնվող հունաց ազգերի մասին, հեղինակը հիշում է նրանց վրա հարձակումներ գործող «Եղիմացւոց և Տաճկաց, Պարսից եւ Քրդաստանեայց» (տ. 297—298) ազգերի մասին, նաև «նեոողաց ազգի» (տ. 300), որոնց պատճառով «պակասութիւն երկուց եւս ազգաց Հայաստանեայց եւ Յունաց լինի» (տ. 313—315)։

«Ենպիսիանը» չալ-լատին միարանության կողմնակից է և այդ ժողովուրդների դաշինքը «կանխատեսություն» չանգույցն է կազմում: Մանրամասն խոսվում է հռոմայնացվող կայսր Կոստանդին Մեծի և հայոց թագավոր Տրդատ Գ-ի միջև հաստատված դաշինքի մասին. «գալ-նաւորեալ մեծաւ հաստատութեամբ առաջի Աստուծոյ սիրով կալ ընդ միմեանս մինչեւ յօր մահուտն իւրեանց եւ յորդոց մինչեւ յորդիս Կոստանդին եւ Տրդատ» (տ. 347—350): Տրդատի և Գրիգորի ձոռն գնալու և կայսրից ու Սեզրեստրոս պապից ընդունելության արժանանալու մասին:

Ահա այսքանով «Ենպիսիանը» բավարարվում է «անցյալին» պատմությամբ և այնուհետև պատմում է ապագայի մասին, սկսելով հայոց պետականության վերացումից, հավանաբար XI դ.: «Կանխագուշակութեան» մեջ խոսվում է Քաթի աղզի» կողմից Երուսաղեմի գրավման (տ. 318—319), Բայց և հռոմայնացվող զորքերի կողմից Քաթի աղզի» կոտորման մասին. «միանգամ եւ երկիցս նա եւ երկիցս եւ աւելի. առնուն եւ զմեծն Անտիօք եւ զկնի այնորիկ զսուրբ եւ զմեծ քառանք Երուսաղէմ» (տ. 326—328): Այս փաստերի հիման վրա Զ. Յրասսոնը գտնում է, որ աշխատությունը պետք է ստեղծված լինի 1099—1167 թթ. միջև (էջ XLV):

«Կանխագուշակության» համաձայն Երուսաղեմը «այլ ոչ եւս անկցի ի ձեռս անօրինաց. միայն եթէ Տէր կամեսցի, այլ կա եւ մնայ պահեալ մինչեւ ի գալ համայն գօրացն արեւմտեան, որ են ֆրանկք» (տ. 339—342):

«Ենպիսիանը» խոսելով հայոց թագավորության անկման, այլազգի ցեղերի Հայաստանում հաստատվելու մասին, այնուամենայնիվ, «տեսնում է» հայկական թագավորության վերականգնումը: Նա «գուշակում է», որ ապագայում Հռոմ քաղաքում ծնվելու է Մեծ Կոստանդինի շառավիղներից մի մանուկ, որին նախահավի անունով կոչելու են Կոստանդին, իսկ Հայաստանին, ավելի որոշակի՝ Անիում, Տրդատ Արշակունու շառավիղներից մի այլ մանուկ, որին իր նախահավի անունով կոչելու են Տրդատ: Դրանից երեք տարի առաջ ծնվելու է Գրիգոր Լուսավորչի ազգից մի մանուկ, որին կոչելու են Գրիգորիոս: «Ենպիսիանը» ավելացնում է, որ Անի քաղաքն այն ժամանակ գտնվելու է «ընդ տէրութեամբ Վրաց» (տ. 366—367): Զ. Յրասսոնը միանգամայն ճիշտ կերպով պատշաճ ուշադրություն է դարձնում այս կարևոր փաստի վրա, նշելով, որ Անին վրացիներն ազատագրեցին Դավիթ Բ Շինարարի օրոք՝ 1124 թ., իսկ դրանից հետո՝ 1161 թ. և 1177 թ.՝ (1174)՝ Գրիգորի Գ-ի: Դժվար է ասել, գրում է Զ. Յրասսոնը, թե հուշարձանում ո՞ր ազատագրման մասին է խոսքը (էջ XLIX): Բոլոր դեպքերում Զ. Յրասսոնը հուշարձանը թվագրում է XII դ. (էջ XLIX):

«Ենպիսիանը» այնուհետև գրում է, թե հեր Կոստանդինն ու Տրդատը դառնան 12 տարեկան. զրավելու են իրենց հայրերի թագավորական գահը: Ամուր դղյակներում, լեռների գագաթներին, խոր ձորերում ապավինած հայկական զորքերը, մանավանդ «տիրասէր ազգն Մամիկոնէից» (տ. 383) հավաքվելու են Տրդատի շուրջ և ակաելու են այլազգիներից վրեժ լուծելու: Արևմուտքում նույնն է անելու Կոստանդին թագավորը: Նրանք երեք տարվա ընթացքում նվաճելու են «ի ծովէն արեւելեան Կասրիական, մինչեւ ի ծով յարեւմտեան Ուկկիանոս. եւ ի ծովէն հիւսիսոյ աշաւորն Պոնտոս, մինչեւ ի ծով Հնդկաց» (տ. 414—417): Իսկ երբ երկու վեհապետները դառնան 15 տարեկան, նրանք գալու են Երուսաղեմ, որտեղ «իսկոյն ձեռնադրեսցէ պապն Հռոմայ զԳրիգորիոս... կաթողիկոս Հայոց Մեծաց... վերստին նորոգելով զաթոռ քահանայապետութեան որպէս զթագաւորութեան» (տ. 456—462): Կոստանդինն ու Տրդատը Երուսաղեմում մնալու են քառասուն օր, որից հետո «ըստ օրինի հարցն իւրեանց դաշնաւորեալք... խաղաղութեամբ լինել առ իրարս մինչեւ յօր մահուանն իւրեանց, տալով զիր վկայութեանց միմեանց...» (տ. 469—474), որից հետո գնալու են իրենց հերկները, որտեղ «կան եւ մնան երկուք եւ թաղաւորք Կոստանդին եւ Տրդատ... աւելի եւս քան զհարիւր ամ» (տ. 493—495): «Կոստանդինը ընդ ձեռամբ ունելով զհայրենիսն իւր զթագաւորեալ քաղաքն Կոստանդնուպօլիս եւ զամենայն արեւմուտս. նմանապէս եւ Տրդատ զՀայաստան եւ զԱտրպատական եւ զամենայն տունն արեւելեան» (տ. 520—525): Ապա «Ենպիսիանը» շարունակում է, թե Կոստանդինն ու Տրդատը ամուսնանալու են երեսուն տարեկան հասակում. Կոստանդինը վնասված է առնելու Հնդկաց թագավորի դստեր, նրանից ունենալու է որդի, որին ևս կոչելու է Կոստանդին, իսկ Տրդատը փին է առնելու Մամիկոնյաններից և ծնվելիք որդուն կոչելու է նմանապես Տրդատ: Կոստանդինն ու Տրդատը հարյուր տարի ապրելուց հետո վախճանվելու են, գահերը ժառանգելու են կրտսեր Կոստանդինն ու Տրդատը: Վախճանվելու է նաև Գրիգորիոս կաթողիկոսը, որի փոխարեն ձեռնադրվելու է իր հղբորդորին՝ Ռստակեսը: Վախճանված Գրիգորիոսը թաղվելու է Երեւոյաց գավառի Քոր-շան գյուղաքաղաքում:

Կրտսեր Կոստանդինը ժառանգելու է իր մոր հոր՝ Հնդկաց թագավորի պետությունը, հռոմեաց և հունաց զորքերով գալու է Երուսաղեմ, ուր ժամանելու են նաև Տրդատն ու Ռատակեսը, ինչպես է Հռոմի Պետրոս պապը։ Ահա այստեղ կատարելու են սուրբ Խաչի պաշտոնը՝ Տերեքեան դասըն Ֆոռնկաց և Հայոց և Յունաց» (տ. 691—692), որոնց գլխավորելու են պապն Հռոմա։ և կաթողիկոսն Հայոց և պատրիարքն Յունաց...» (տ. 722—723)։ Թագավորներն ու քառանյապետները մի ամիս մնալով Երուսաղեմում, վերադառնալու են իրենց երկրները։ Թագավորները վախճանվելու են անժառանգ, քանզի «ամուսնացեալք ոչ եւս լինին, այլ կուսուխեասք հրաժարեն յերկրէ» (տ. 764—765)։

Ինչպես ցույց է տալիս Զ. Ֆրասսոնը, վերոհիշյալ դաշինքի վերանորոգման մասին վկայում են է այլ սկզբնաղբյուրներ։ Այդ առթիվ իտալացի բանասերը մեջ է բերում Կիրակոս Գանձակեցու տվյալները, միաժամանակ դիմելով վաղ միջնադարյան աղբյուրներին (Բուզանդ, Խոռենացի և այլն), որոնք խոսում են «Դաշնաց թղթի» վերանորոգման մասին և հատկապես ընդգծում այն հանգամանքը, որ եթե ըստ V դ. աղբյուրների այդ դաշինքը վերանորոգվու համար հայերը գնում են Կոստանդնուպոլիս, ապա XII դ. աղբյուրներում խոսքը Երուսաղեմի մասին է, մի բան, որ վկայում է մեր աղբյուրի XII դ. աղբյուրների հետ ունեցած մոտիկությունը (էջ LII)։

Հիշյալ դեպքերից երեսուն տարի առաջ ծնվելու է Նեոը, Հռոմեայի և Մելիտենի որդին, որ 22 տարեկան հասակում սկսելու է կախարդական արվեստն ուսուցանել, նա գալու է Կոստանդնուպոլիս, որն ընդ ձեռամբ Հռոմայեցոց նուաճեալ լինի»։

Այս առնչությամբ Զ. Ֆրասսոնը հիշում է Կիրակոս Գանձակեցու աշխատության մեջ բերված րյուզանդական կայսեր Ալեքսիոս Կոմնենոսի և նրա անմիջական հաջորդների վերաբերյալ պատմությունը և լեզբները, որոնց համաձայն Մանուել Կոմնենոսը նույնացվում է հենց Նեոի հետ, ընդգծում այն հանգամանքը, որ Եպիփանիս վերագրված տեքստում Նեոը հարաբերություն ունի Բյուզանդական կայսրության հետ։

«Եպիփանես» այնուհետև խոսում է հունաց թագավորության տասը մասի բաժանվելու մասին, որոնցից մեկը պիսավորելու է Նեոը։ Նա ոչնչացնելու է երեքին, մնացած վեց թագավորները ստիպված են թարկվելու ևն իրեն։ Հնազանդեցնելով Կոստանդնուպոլիսը, Նեոը գալու է Հրեաստան «ամենայն զօրօքն Յունաց» (տ. 865—866)։ Նեոին ընդառաջ են գալու հրեաների 12 ազգեր և ռորդիքն Հաղարու և Պարսք և Քրդաստանը...» (տ. 895—896), բազմաթիվ այլ ծանոթ և անծանոթ ազգեր։ Բոլորը հարձակվելու են քրիստոնյա ժողովուրդների վրա, որոնք փախստական են լինելու «մերձ ի ծովն Կասիական» (տ. 919—920)։ Այդ ժամանակներում քրիստոնեություն է քարոզելու Եկաթողիկոս Հայոց Ռեստակէս եղբոր որդին Գրիգորիս։ Նա գալու է Եկեղյաց գավառը, որտեղ և դառնալու է ամբարիշտների զոհը։ Վերջում Նեոը և նրա առաջնությունը կործանվելու են Քրիստոսի զորությամբ, փախստական քրիստոնյաները գալու են յուրաքանչյուրն իր գավառը, վերականգնելու են ավերված եկեղեցիները։

Ահա համառոտակի Մտոյն Եպիփանեսու ասացեալ Յաղագս Նեոինն» աշխատության բովանդակությունը։

Հրատարակիչն իր մանրակրկիտ ու բովանդակային առաջաբանում, բացի վերոհիշյալ հարցերից, խոսում է նաև այս աշխատության համար աղբյուր ծառայած բազմաթիվ գործերի մասին։

Զ. Ֆրասսոնը, մեր համոզմամբ, երկու բնագրերը կազմել ու հրատարակել է մեծ բարեիղճությամբ, բնագրային թերություններ ըստ էության չկան։ Բայց մի փաստի վրա այնուամենայնիվ ցանկանում ենք կանգ առնել։ Բնագրում երկու անգամ հանդիպում է միևնույն նախադասությունը։ 1) «պեղծն այն և գարշելի խեբքն» (տ. 1090—1091) և 2) «պեղծն այն և գարշելի խեբքն» (տ. 1160)։ Հասկանալի է, որ վերոհիշյալ նախադասությունների վերջին բառը զրդի կողմից մի անգամ սխալ է արտագրված, ուստի կամ «խեբք»-ը պիտի ընդունել, կամ «խենթ»-ը և երկու դեպքում էլ տալ բառի միևնույն թարգմանությունը։ Այնինչ առաջին դեպքում թարգմանվել է abominandus stultus (խենթ), իսկ մյուս դեպքում՝ abominabilis strabo (խեթ)։

«Հունարանությունների» մեջ Զ. Ֆրասսոնը կանգ է առնում բնագրի «հնարուն» բառի վրա,

1 Բնագրում՝ «լինին»։ Ուղղելի՝ «լինի»։ Գուցե Կոստանդնուպոլիսը հաշվարաց IV արշավանքի մասնակիցների կողմից 1204 թ. նվաճելու ականարկ է։ Դրա օգտին է խոսում և այն փաստը, որ հիշվում են կրոնական երեք պետեր՝ հայ, հույն և հռոմայեցի, բայց երկու թագավոր՝ հայ և հռոմայեցի։ Հույն թագավոր չկա։

որն, իր կարծիքով, հունարեն παλαιότης (լատ. vetustus) պատճենավորումն է: Նա միա-
ժամանակ ցույց է տալիս, որ բառը հայերեն այլ բնագրերում չի վկայված: Մեր կարծիքով
այն պետք է «հնաբան» կարդալ: Այդ դեպքում բառի հունարենը կլինի παλαιότης, որ ավելի է
հարմարվում «Եպիփանի» տվյալ տեղին, որտեղ խոսվում է «հին պատմություններ» բովան-
դակող գրքերի մասին: Նշենք, որ «Եպիփանի» բնագրում կա «ա»-ի և «ու»-ի շփոթություն
(հմմտ. Վիեննայի բնագիր, տող 257, «զգուշաթեամբ», փխն. «զգուշութեամբ»):

Տպագրական սխալները չնչին են (էջ LIII, «ղխանգախ», փխն. «ղխարդախ»: Տե՛ս նաև
տող 663, 970—971): Հունարեն մի քանի վրիպակներ կան XXI, 246, 272 էջերում:

Հայերեն բնագրի թարգմանության լեզվի հարցի մասին խոսելիս, նշենք, որ թեև այժմ էլ
Արևմուտքում լայն տարածում ունի սկզբնաղբյուրները լատիներեն թարգմանելու պրակտիկան
(դա գալիս է դեռևս միջնադարից, երբ գիտություն միակ լեզուն լատիներենն էր), այժմ՝ XX դ.
հիմնականում, հեղինակը այդպես վարվելով կամովին նեղացնում է իր ընթերցողների շրջա-
նակները: Զ. Ֆրասսոնը գիտությունն ու մասնագետներին շատ ավելի օգուտ տված կլինեիր, եթե
այս աղբյուրը թարգմանեիր գրաբարից ոչ թե լատիներեն (այսինքն մի մեռած լեզվից մի ուրիշ
մեռած լեզվի), այլ որևէ եվրոպական լեզվով:

Այնուհետև, ուսումնասիրական մասը շահած կլինեիր, եթե հեղինակը ծանոթ լինեիր ակա-
դեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «երկհատոր աշխատության»², որն անմիջականորեն առնչվում է
Զ. Ֆրասսոնի հետազոտության նյութին:

Հրատարակիչը գրքին կցել է հիմնականում աստվածաբանական բնույթի մանրամասն ու
արժեքավոր ծանոթագրություններ (էջ 169—338): Ծանոթագրությունները (ինչպես և ուսում-
նասիրությունը) դրված է իտալերեն, որոնք օգնում են ընթերցողին լայն պատկերացում կազ-
մելու հրատարակվող բնագրի մոպ՝ ու անհավանալի տեղերի, պատմական, աշխարհագրական,
բանասիրական, աղբյուրագիտական, կրոնադավանաբանական, լեզվաբանական բազմաթիվ հար-
ցերի մասին և այլն: Այդուհանդերձ, անենք մի քանի դիտողություններ:

«Եպիփանի» խոսելով Հայաստան արշավելիք այլազգիների մասին, դրանք թվում հիշա-
տակում է Քամի անիծյալ ազգին և նրա ցեղակիցներին, «որ անուանեալ կռիւն հուզիք [որ են
Թուրք]» (տ. 81—82): Զ. Ֆրասսոնը «որ են Թուրք» բառերը առնում է անկյունավոր փա-
կագծերի մեջ, դտնելով, որ դրանք, ամենայն հավանականությամբ, հետագա շրջանի ընդմի-
ջարկություն են (էջ 183): Բայց կարող է և այդպես չլինել: Այստեղ հարկ է հիշել IX դ. սկզբի
հեղինակ Թեոփանես խոստովանողի ժամանակագրության հետևյալ բառերը τούτοις τοῦτοισι, ἐκ
τῆς ἐξῆς, οὗτοι Ἰσχυροὶ οὐρανοῦ: Ինչ վերաբերում է «խուզիկներին», ապա նրանց վերաբերյալ
կարելի է ավելացնել նաև ներսես Բ Բագրևանդցի կաթողիկոսի (548—556 թթ.) թղթակցու-
թյունների մեջ գտնվող «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիսս վերնագիրը կրող փաստա-
թուղթը, որտեղ մանրամասն խոսվում է «վասն չար աղանդին հուսկաց նետորակաճանց»³:

Խոսելով «Տաճիկներին» (իմա՝ արաբներին) մասին Զ. Ֆրասսոնը ցույց է տալիս, որ նրանք
հիշվում են սբ. Ներսեսի վարքում, որտեղ, ըստ Զ. Ֆրասսոնի, նույնացվում են պարսիկների
հետ: Մական իրականում վարքում «տաճիկները» և «պարսիկները» չեն նույնացվում, այլ
տարբեր ժողովուրդներ են համարվում («և ոչ թագաւորէ նա Տաճկաց կամ Պարսկաց կամ
այլազգաց»⁴: «Պարսիկներ» արտահայտության տակ ենթադրվում են ոչ թե պարսիկները, այլ
այդ անունով հայտնի սելջուկները (հմմտ. նաև XI և հետագա դարերի բյուզանդական աղբյուր-
ները):

Խնդրո առարկա բնագրի ձեռագրում մի քանի անգամ հանդիպում է «ազգանազեան» (իմա՝
Ասքանազեան) բառը, որ ըստ Զ. Ֆրասսոնի «բացակայում է հայերեն բուրբ բառարաններում»
(էջ 202): Սակայն «ազգանազեան» ընթերցումը պարզ ուղղագրական սխալ է, որ, ի միջի
այլոց, մատնում է արտագրողի արևմտահայ լինելը, որի համար ք» և «զ» տառերը միևնույն
կերպ են հնչում (հմմտ. և «Քեհնովն», փխն. «Գեհնովն», «Ազադանդեղոս», փխն. «Ազաթանդե-
ղոս»՝ խնդրո առարկա սկզբնաղբյուրներում):

² Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, 2, Երևան, 1957, 1959:

³ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1904, էջ 72—75, տե՛ս նաև Եր. Գ. Տեր-Մինասյան, Նես-
տորականությունը Հայաստանում («Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան,
1971, էջ 364 և հտ.):

⁴ «Սոփեբք», հ. 2, էջ 93:

Բնագրի «ուսումնասիր»-ը թարգմանված է sapientiae-studiosis և համարվում է հունարեն *σοφιστικισ-ին* համապատասխանող: Դա ոչ թե *σοφιστικισ-ին* է համապատասխանում (հայերեն կլինի «իմաստասեր»), այլ *σοφιστικ-ին* կամ *σοφισտ-ին*⁵:

Ջ. Ֆրասսոնը Անին համարում է Բագրատունիների մայրաքաղաքը հենց այդ հարստության հիմնադրման օրից (885 թ.) մինչև քաղաքի առումը բյուզանդացիների կողմից Կոստանդին Մոնոմախի օրոք, ըստ Ջ. Ֆրասսոնի՝ 1065 թ. (էջ 225—226): Վերջին թվականը, ըստ Երևույթին, տպագրական վրիպակ է, քանզի Մոնոմախը մեռել է 1054 թ., իսկ Անին նա դրավել է 1045 թ.: Ասենք նաև, որ Անին մայրաքաղաք դարձավ Աշոտ Գ Ողորմածի օրոք 961 թ., մինչև այդ Բագրատունիները հիմնական նստավայր չունեին և հաստատվել են մերթ Բագարանում, մերթ՝ Երազգավորսում (Շիրակավան): Առաջարկում (էջ XLIX) Ջ. Ֆրասսոնը դրում է, թե Անին Բագրատունիների մայրաքաղաքն էր մինչև 1079 թ.: Նախ, Բագրատունիների հարստությունը վերացավ 1045 թ. (Գագիկ Բ-ի մահվան թվականը՝ 1079 թ. չի համընկնում հարստության անկման թվականի հետ), իսկ 1045-ից հետո, մինչև 1064 թ., երբ քաղաքը գրավվեց Այդ-Արսլանի հրոսակների կողմից, Անին «Հայաստանի և Իբերիայի» կատապանության կենտրոնն էր:

Ռուբինյան հարստությունը Ջ. Ֆրասսոնը թվագրում է 1080—1375 թթ., այնինչ Ռուբինյանների իշխանությունը վերացավ 1226 թ., երբ զահ Բարձրացան Հեթումյանները ձիջտ չէ, հարկավ, Է: այն պնդումը, թե Սիսը Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաքն էր հենց 1080 թ., Ռուբինյան իշխանության հաստատման օրից: Ռուբինյանների նստավայրը սկզբնական շրջանում Վահկա բերդն էր, Սիսը մայրաքաղաք դարձավ 1173 թ. Միհր իշխանի կողմից⁶:

Ավարտելով մեր խոսքը Ջ. Ֆրասսոնի գրքի մասին, ընդգծենք, որ հրատարակիչը գիտական հասարակայնությանն է ներկայացրել մի լուրջ ուսումնասիրություն, կարևոր սկզբնաղբյուր, որ արժեքավոր նյութ է մատակարարում հայագիտության բաղում բնագավառների հետազոտության համար: Հարցին քաջատեղյակ մի մասնագետի կողմից կատարված է մեղմաշան աշխատանք և այն արժանի է բարձր գնահատականի:

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

⁵ «Նոր բառգիրք հայկադյան լեզվի», Բ, Վենետիկ, 1837, էջ 556:

⁶ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 684, Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1893, էջ 47: